ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ »-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՆԻ ՊԵՄԶԱ, ԱՆԻԱՎԱՆ , ՍԱՐԱԿԱՊ, ՀԱՅԿԱՁՈՐ և ԲԱՐՁՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/14

ք. Մարալիկ «9» օգոստոս 2019 թ.

«ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանը», ի դեմս Ա. Գևորգյանի, որը գործում է <<<< Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմ>> կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, <<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի,, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անի Պեմզա, Անիավան, Սարակապ, Հայկաձոր և Բարձրաշեն բնակավայրերի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 18.09.2019:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող

աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5 394 000 (հինգ ,միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ, որից 899 000 (ութ հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 677 000 (վեց հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ՝ որից 135 000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որից 240 000երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 1 050 000 (մեկ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 210 000 երկու հարյուր տաս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին 970 000 (ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ որից 194 000 (մեկ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5-րդ չափաբաժին 598 000 (հինգ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ՝ որից 119 600 (մեկ հարյուր տասնինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն[31] :

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև ---------- (----------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

---

[31] *Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքվելիս սույն կետից հանվում են «որից -------- (----------) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:*

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[33] *Եթե պայմանագրում նախատեսված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:* sal xml

[34] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը նախատեսում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: sal xml

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[35] :

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[36] :

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

---

[35] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[36] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.*

sal xml :

Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Անի համայնքապետարան	<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ
ք. Մարալիկ, Մադաթյան 1	ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49
<<Կենտրոնական գանձապետարան>>	<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05546057	ՀՎՀՀ 05504189
Հ/Հ 900492171088	h/h 2051222031231001
Համայնքապետ՝ Ա. Գևորգյան	Տնօրեն՝ Լ. Վարդանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« » օգոստոսի 2019թ. կնքված
ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/14 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՆԻ ՊԵՄԶԱ, ԱՆԻԱՎԱՆ , ՍԱՐԱԿԱՊ, ՀԱՅԿԱՁՈՐ և ԲԱՐՁՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ծավալաթերթ հաշվարկ

Հաշվարկ

N	Աշխ-րի և ծախսերի շիֆրը	Աշխատանքների անվանումը	չ.մ.	Քանակ	Միավորի արժեմտ հազ.դրամ	Ընդհանուրըհազ.դրամ
1	2	3	4	5	6	7
		Անի Պեմզա				
		Շինարարական աշխատանքներ				
1	33--621 կիրառ	Պողպատե հենասյուների տեղադրում բնահողի մշակումով, սյուների ներկումով/ d-108*3.5մմ H=6մ	հատ	5	23,500	117,500
2	ռ21--267 գ-0,6	Փոսորակի բետոնացում B7.5 դասի բետոնով	խոր.մ	2,5	23,000	57,500
3	15--614	Հենասյուների ներկում 2 անգամ գունավոր 5հատ	քառ.մ	5,65	0,400	2,260
		Ընդամենը				177,260
		Մոնտաժ				
4	8--150-4	ԱԲԲԳ 1*10քառ.մմ հատ.ալյումինե ջղերով մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/	100 գծ.մ	7,20	12,000	86,400
5	8--149-1	ԱԲԲԳ 3*4քառ.մմ հատ ալյումինե ջղերով մալուխի անցկացում խողովակների միջով	100 գծ.մ	0,96	6,500	6,240
6	8--525-2	Ավտոմատ անջատիչ	հատ	8	2,000	16,000
7	8-370-3	Արտաքին լուսատուների մոնտաժում	հատ	8	4,000	32,000
8	8-370-3	Վահանակ 40*30*20սմ	հատ	1	4,000	4,000
9	15--614	Հենասյուների ներկում 2 անգամ գունավոր	քառ.մ	9,42	0,918	8,650
		Ընդամենը				153,290
		Նյութեր				
10		Մետաղական կալունակներ	հատ	5	0,400	2,000
11		Լուսատու լուսադիոդային արժեքը 70вт	հատ	8	23,000	184,000
12		Ավտոմատ անջատիչ 60Ա	հատ	1	1,200	1,200
13		ԱՊՊՎ380 հատ 1*10քառ.մմ հաղորդալար	գծ.մ	720	0,100	72,000
14		ՄալուԱՎՎԳ 3*4մմ	գծ.մ	96	0,120	11,520
15		Ժամանակի ռելե	հատ	1	4,500	4,500
16		Շերտապողպատ 300*300*5մմ	կգ	17,66	0,500	8,830
17		Պողպատից ճկախողովակ D=20մմ	գծ.մ	96	0,400	38,400

18		Մեկուսիչ	հատ	10	0,400	4,000
19		Անկյունակ 45մմ	գծ.մ	2	1,000	2,000
20		Վահանակ 40*30*20սմ	հատ	1	18,000	18,000
		Ընդամենը				346,450
					Ընդհանուրը	677,000
					ԱԱՀ 20%	135,400
					Ընդամենը	812,400

		Անի Ավան				
		Շինարարական աշխատանքներ				
21	33--621 կիրառ	Պողպատե հենասյուների տեղադրում բնահողի մշակումով, սյուների ներկումով/ d-108*3.5մմ H=6մ	հատ	12	23,500	282,000
22	ռ21--267 գ-0,6	Փոսորակի բետոնացում B7.5 դասի բետոնով	խոր.մ	6	23,000	138,000
		Ընդամենը				420,000
		Մոնտաժ				
23	8--150-4	ԱԲԲԳ 1*10քառ.մմ հատ.ալյումինե ջղերով մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/	100 գծ.մ	9,6	12,000	115,200
24	8--149-1	ԱԲԲԳ 3*4քառ.մմ հատ ալյումինե ջղերով մալուխի անցկացում խողովակների միջով	100 գծ.մ	1,44	6,500	9,360
25	8--525-2	Ավտոմատ անջատիչ	հատ	12	2,000	24,000
26	8-370-3	Արտաքին լուսատուների մոնտաժում	հատ	12	4,000	48,000
27	8-370-3	Վահանակ 40*30*20սմ	հատ	2	4,000	8,000
28	15--614	Հենասյուների ներկում 2 անգամ գունավոր	քառ.մ	22,61	0,689	15,580
		Ընդամենը				220,140
		Նյութեր				
29		Մետաղական կալունակներ	հատ	12	0,400	4,800
30		Լուսատու լուսադիոդային արժեքը	հատ	12	23,000	276,000
31		Ավտոմատ անջատիչ 60Ա	հատ	12	1,200	14,400
32		ԱՊՊՎ380 հատ 1*10քառ.մմ հաղորդալար	գծ.մ	960	0,100	96,000
33		ՄալուԱՎՎԳ 3*4մմ	գծ.մ	144	0,120	17,280
34		Շերտապողպատ 300*300*5մմ	կգ	42,36	0,500	21,180
35		Պողպատից ճկախողովակ D=20մմ	գծ.մ	144	0,400	57,600
36		Մեկուսիչ	հատ	24	0,400	9,600
37		Ֆոտոդիոդային սարք	հատ	0	9,110	0,000
38		Ժամանակի ռելե	հատ	2	4,500	9,000
39		Անկյունակ 45մմ	գծ.մ	18	1,000	18,000
40		Վահանակի համար 40*30*20սմ	հատ	2	18,000	36,000

		Ընդամենը				559,860
					Ընդհանուրը	1 200,000
					ԱԱՀ 20%	240,000
					Ընդամենը	1 440,000

		Սարակապ				
		Հիմնարարական աշխատանքներ				
41	33--621 կիրառ	Պողպատե հենասյուների տեղադրում բնահողի մշակումով, սյուների ներկումով/ d-108*3.5մմ H=6մ	հատ	10	23,500	235,000
42	ռ21--267 գ-0,6	Փոսորակի բետոնացում B7.5 դասի բետոնով	խոր.մ	5	23,000	115,000
		Ընդամենը				350,000
		Մոնտաժ				
43	8--150-4	ԱԲՎԳ 1*10քառ.մմ հատ.ալյումինե ջղերով մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/	100 գծ.մ	8,8	12,000	105,600
44	8--149-1	ԱԲՎԳ 3*4քառ.մմ հատ ալյումինե ջղերով մալուխի անցկացում խողովակների միջով	100 գծ.մ	1,2	6,500	7,800
45	8--525-2	Ավտոմատ անջատիչ	հատ	10	2,000	20,000
46	8-370-3	Արտաքին լուսատուների մոնտաժում	հատ	10	4,000	40,000
47	8-370-3	Վահանակ 40*30*20սմ	հատ	0	4,000	0,000
48	8--613-2	Հաշվիչի տեղադրում 1ֆ	հատ	0	1,040	0,000
49	15--614	Հենասյուների ներկում 2 անգամ գունավոր	քառ.մ	18,84	0,693	13,050
		Ընդամենը				186,450
		Նյութեր				
50		Մետաղական կալունակներ	հատ	10	0,400	4,000
51		Լուսատու լուսադիոդային արժեքը	հատ	10	23,000	230,000
52		Ավտոմատ անջատիչ 60Ա	հատ	10	1,200	12,000
53		ԱՊՊՎ380 հատ 1*10քառ.մմ հաղորդալար	գծ.մ	880	0,100	88,000
54		ՄալուԱՎՎԳ 3*4մմ	գծ.մ	120	0,120	14,400
55		Շերտապողպատ 300*300*5մմ	կգ	35,3	0,500	17,650
56		Պողպատից ճկախողովակ D=20մմ	գծ.մ	120	0,400	48,000
57		Մեկուսիչ	հատ	10	0,400	4,000
58		Ֆոտոդիոդային սարք	հատ	10	3,550	35,500
59		Ժամանակի ռելե	հատ	10	4,500	45,000
60		Անկյունակ 45մմ	գծ.մ	15	1,000	15,000
		Ընդամենը				513,550
					Ընդհանուրը	1 050,000
					ԱԱՀ 20%	210,000
					Ընդամենը	1 260,000

		Հայկաձոր				

		Շինարարական աշխատանքներ				
61	33-621 կիրառ	Պողպատե հենասյուների տեղադրում բնահողի մշակումով, սյուների ներկումով/ d-108*3.5մմ H=6մ	հատ	10	23,500	235,000
62	ռ21--267 գ-0,6	Փոսորակի բետոնացում B7.5 դասի բետոնով	խոր.մ	5	23,000	115,000
		Ընդամենը				350,000
		Մոնտաժ				
63	8--150-4	ԱԲՎԳ 1*10քառ.մմ հատ.ալյումինե ջղերով մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/	100 գծ.մ	8,8	12,000	105,600
64	8--149-1	ԱԲՎԳ 3*4քառ.մմ հատ ալյումինե ջղերով մալուխի անցկացում խողովակների միջով	100 գծ.մ	1,2	6,500	7,800
65	8--525-2	Ավտոմատ անջատիչ	հատ	10	2,000	20,000
66	8-370-3	Արտաքին լուսատուների մոնտաժում	հատ	10	4,000	40,000
67	15--614	Հենասյուների ներկում 2 անգամ գունավոր 20հատ	քառ.մ	18,84	0,719	13,550
		Ընդամենը				186,950
		Նյութեր				
68		Մետաղական կալունակներ	հատ	10	0,400	4,000
69		Լուսատու լուսադիոդային արժեքը	հատ	10	23,000	230,000
70		Ավտոմատ անջատիչ 60Ա	հատ	10	1,200	12,000
71		ԱՊՊՎ380 հատ 1*10քառ.մմ հաղորդալար	գծ.մ	880	0,100	88,000
72		ՄալուԱՎՎԳ 3*4մմ	գծ.մ	120	0,120	14,400
73		Շերտապողպատ 300*300*5մմ	կգ	35,3	0,500	17,650
74		Պողպատից ճկախողովակ D=20մմ	գծ.մ	120	0,400	48,000
75		Մեկուսիչ	հատ	10	0,400	4,000
76		Անկյունակ 45մմ	գծ.մ	15	1,000	15,000
		Ընդամենը				433,050
					Ընդհանուրը	970,000
					ԱԱՀ 20%	194,000
					Ընդամենը	1 164,000

		Բարձրաշեն				
		Շինարարական աշխատանքներ				
77	33--621 կիրառ	Պողպատե հենասյուների տեղադրում բնահողի մշակումով, սյուների ներկումով/ d-108*3.5մմ H=6մ	հատ	5	23,500	117,500
78	ռ21--267 գ-0,6	Փոսորակի բետոնացում B7.5 դասի բետոնով	խոր.մ	2,5	23,000	57,500
		Ընդամենը				175,000
		Մոնտաժ				
79	8--150-4	ԱԲՎԳ 1*10քառ.մմ հատ.ալյումինե ջղերով մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/	100 գծ.մ	7	12,000	84,000

80	8--149-1	ԱԲՎԳ 3*4քառ.մմ հատ ալյումինե ջղերով մալուխի անցկացում խողովակների միջով	100 գծ.մ	0,6	6,500	3,900
81	8--525-2	Ավտոմատ անջատիչ	հատ	5	2,000	10,000
82	8-370-3	Արտաքին լուսատուների մոնտաժում	հատ	5	4,000	20,000
83	8-370-3	Վահանակ 40*30*20սմ	հատ	1	4,000	4,000
84	15--614	Հենասյուների ներկում 2 անգամ գունավոր 20հատ	քառ.մ	9,42	0,942	8,870
		Ընդամենը				130,770
		Նյութեր				
85		Մետաղական կալունակներ	հատ	5	0,400	2,000
86		Լուսատու լուսադիոդային արժեքը 70ՎՏ	հատ	5	23,000	115,000
87		Ավտոմատ անջատիչ 60Ա	հատ	1	1,200	1,200
88		ԱՊՊՎ380 հատ 1*10քառ.մմ հաղորդալար	գծ.մ	700	0,100	70,000
89		ՄալուԱՎՎԳ 3*4մմ	գծ.մ	60	0,120	7,200
90		ժամանակի ռելե	հատ	1	4,500	4,500
91		Շերտապողպատ 300*300*5մմ	կգ	17,66	0,500	8,830
92		Պողպատից ճկախողովակ D=32մմ	գծ.մ	60	0,900	54,000
93		Մեկուսիչ	հատ	10	0,400	4,000
94		Անկյունակ 45մմ	գծ.մ	7,5	1,000	7,500
95		Վահանակ 40*30*20սմ	հատ	1	18,000	18,000
		Ընդամենը				292,230
					Ընդհանուրը	598,000
					ԱԱՀ 20%	119,600
					Ընդամենը	717,600

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Անի համայնքապետարան	<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ
ք. Մարալիկ, Մադաթյան 1	ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49
<<Կենտրոնական գանձապետարան>>	<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05546057	ՀՎՀՀ 05504189
Հ/Հ 900492171088	հ/հ 2051222031231001
Համայնքապետ Ա. Գևորգյան	Տնօրեն՝ Լ. Վարդանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 2
« » օգոստոսի 2019թ. կնքված
ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/14 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անի Պեմզա, Անիավան, Սարակապ, Հայկաձոր և Բարձրաշեն բնակավայրերի լուսավորության ցանցի կառուցման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անի Պեմզա բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	45
2	**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	45
3	**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Սարակապ բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	45
4	**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	45
5	**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Բարձրաշեն բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	45
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Անի համայնքապետարան

ք. Մարալիկ, Մադաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492171088
Համայնքապետ՝ Ա. Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49
<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05504189
հ/հ 2051222031231001
Տնօրեն՝ Լ. Վարդանյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
« » օգոստոսի 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45311137	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անի Պեմզա բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
2	45311137	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
3	45311137	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Սարակապ բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
4	45311137	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
5	45311137	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Բարձրաշեն բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Անի համայնքապետարան

ք. Մարալիկ, Մադաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492171088
Համայնքապետ՝ Ա. Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49
<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05504189
հ/հ 2051222031231001
Տնօրեն՝ Լ. Վարդանյան

/ստորագրություն/
Կ.Տ

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

Հավելված 8
ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/14 *ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

Անի համայնք «8» օգոստոսի 2019թ.**

<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լորետա Վարդանյան (AN0279813, 009, 29.11.2012թ.)
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Անի համայնքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է,որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ
ընկերության անվանումը

ք.Գյումրի, Կույբիշևի 49
ընկերության հասցեն

Ինեկոբանկ Գյումրի մ/ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2051222031231001
ընկերության բանկային հաշվեհամարը

05504189
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Լորետա Վարդանյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է համձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակել*

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[40]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ <<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Ինեկոբանկ Գյումրի մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ 2051222031231001

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 05504189

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ «ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարան»

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 05546057

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական Գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900492171088

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 539400 /հինգ հարյուր երեսունինը հազար չորս հարյուր /ՀՀ դրամ

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ Հայկական դրամ AMD

.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.